

ԵՐԻՏԱՍԱՆՐՈՒԻ ԼՂՈՌԹԼԳԻՐՔ




ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՇԵԱՐՀԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ
(ՀԵՀԵՄ)

Կենտրոնական գրասենյակ



Ս. ԷՋՄԻԱԾԻՆ 2019



ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Երկու խոսք</i>	5
Տերունական աղոթք	10-11
Առավոտյան աղոթք	12
Աղոթք ֆնելուց առաջ	13
Ճանապարհի աղոթք	14
Աղոթք գործ սկսելուց առաջ	15
Աղոթք դաս սկսելուց առաջ	16
Աղոթք նաշելուց առաջ	17
Աղոթք նաշելուց հետո	17
Աղոթք Ս. Հաղորդություն ստանալուց առաջ	18
Աղոթք Ս. Հաղորդություն ստանալուց հետո	19
Աղոթք Սուրբ Գիրք ընթերցելուց առաջ	20

Աղոթք եկեղեցի մտնելիս	22
Աղոթք եկեղեցուց դուրս գալուց	23
Զղջման աղոթք	24
Պահպանության աղոթք	25
Աղոթք նեղության ժամանակ	26
Աղոթք փորձության ժամանակ	28
Աղոթք Ս. Աստվածածնին	29
Աղոթք ապավինության Ս. Խաչին	30
Բժշկության աղոթք	31
Զինվորի աղոթք	33
Ոսանողի աղոթք.	34
Ուխտավորի աղոթք	36
Սուրբ Հայրերի ամենօրյա աղոթք	38

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

*«Արթո՛ւն կացեք այսուհետև,
ամեն ժամ աղոթք արեք»
(Ղուկ. ԻԱ 36)*

Եկեղեցական հայրերը աղոթքը բնորոշել են որպես երկխոսություն Աստծու հետ, որը մարդ-Աստված հարաբերության առաջին եւ կարևորագույն փայլերից է:

Սաղմոսերգուն ասում է. «Երիտասարդն ի՞նչ միջոցով ուղղի նանապարհն իր, եթե ոչ Քո խոս-

բերը պահելով» (Սղմ. 118:9): Իսկ ինչպե՞ս պահի Տիրոջ խոսքը, եթե ոչ անդադրում ու հանապազօրյա սրտաբուխ աղոթքով:


Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդական Միավորման Կենտրոնական գրասենյակը ձեռնամուխ է եղել սույն «Երիտասարդի Աղոթագրքի» հրատարակությանը, որը կազմվել է Հայ Եկեղեցու դասական աղոթագրքերին բնորոշ ձևով: Աղոթագրքում ներառված են Եկեղեցու Սուրբ հայրերի ու Հայ Եկեղեցու Ժամագրքից վերցված աղոթքներ, որոնք կարող են լինել հայ երիտասարդի ամենօրյա կենսական ուղեկիցը:

Աղոթքներն ընտրելիս նպատակահարմար է դիտվել գրաբարից թարգմանելու աշխարհաբարի՝ հայ երիտասարդին ավելի հասանելի եւ հասկանալի դարձնելու համար:

Տ. Թովմա վրդ. Խաչատրյան

ՀԵՀԵՄ հոգևոր տեսուչ

եւ Կենտրոնական գրասենյակի տնօրեն



ԱՂՈԹԱԳԻՐՔ

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

(Գ Ր Մ Բ Մ Բ)

Օրհնեալ Տէր մեր Յիսուս
Քրիստոս. ամէն:

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սո՛ւրբ եղիցի անուն քո: Եկեսցէ՛ արքայութիւն քո: Եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(ա շ խ ա ր հ ա բ ար)

Օրհնյալ Տեր մեր Հիսուս

Քրիստոս, ամեն:

Հայ՛ր մեր, որ երկնքում ես. սո՛ւրբ
 թող լինի Քո անունը: Քո թագա-
 վորությո՛ւնը թող գա: Քո կա՛մքը
 թող լինի երկրի վրա, ինչպես, որ
 երկնքում է: Մեր ամենօրյա հացը
 տո՛ւր մեզ այսօր: Եվ ների՛ր մեր
 հանցանքները, ինչպես, որ մենք
 ենք ներում նրանց, որ հանցանք
 են գործում մեր դեմ: Եվ մի՛ տար
 մեզ փորձության, այլ փրկի՛ր մեզ
 շարից: Որովհետև Քո՛նն է թա-
 գավորությունը և զորությունը և
 փառքը հավիտյանս, ամեն:

ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՂՈԹՔ

Գոհանում եմ Քեզանից, ո՛վ Տեր իմ և Աստված իմ, և օրհնում ու փառավորում Քո սուրբ անուներ, որ պահեցիր այս գիշեր Քո անարժան ու մեղավոր ծառային բոլոր վտանգներից ու փորձություններից՝ խաղաղությամբ հասցնելով առավոտյան այս ժամին: Եվ արժանացրիր տեսնելու Քո ողորմության լույսը, ամեն:



ԱՂՈԹՔ ՔՆԵԼՈՒՅ ԱՌԱՋ

Բոլորի պահապան, Քրիստոս, թող Քո Աջը գիշեր և ցերեկ հովանի լինի ինձ վրա, տանը նստելիս, ճանապարհ գնալիս, ննջելիս և արթնանալիս, որպեսզի երբեք չսասանվեմ. և ողորմիր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս, ամեն:



ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՂՈԹՔ

Տէր, ուղղիր մեր ընթացքը խաղաղության ճանապարհներով. Տէր, ուղղիր և առաջնորդիր մեր հոգիները և բոլոր հավատացյալներին՝ գնալ արդարության ճանապարհով դեպի հավիտենական կյանք. ամեն:



**ԱՂՈԹՔ ԳՈՐԾ ՍԿՍԵԼՈՒՑ
ԱՌԱՋ**

*Ուղղիր մեր ձեռքի գործերը, Տէր,
և մեր ձեռքի գործերը հաջողեց-
րո՛ւ. ամեն:*



ԱՂՈԹՔ ԴԱՍ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Հոր իմաստությունն՝ Հիսուս,
տո՛ւր ինձ իմաստություն՝ ամեն
ժամ Քո առջև բարին խորհե-
լու, խոսելու և գործելու և փրկի՛ր
ինձ շար մտքերից, խոսքերից և
գործերից. և ողորմի՛ր Քո արա-
րածներին և ինձ՝ բազմամեղիս.
ամեն:



ԱՂՈԹՔ ԶԱՇԵԼՈՒՑ ԱՌԱՋ

*Խաղաղությամբ ճաշակենք
այս կերակուրները, որոնք պար-
գևել է մեզ Տերը: Օրհնյա՛լ է Տերն
Իր պարգևներով, ամեն:*

ԱՂՈԹՔ ԶԱՇԵԼՈՒՑ ՀԵՏՈ

*Փա՛ռք տիեզերքի կերակրո-
ղին, Ով մեզ կերակրեց և լիաց-
րեց: Նրան փառք հավիտյանս,
ամեն:*



ԱՂՈԹՔ
Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՆԱԼՈՒՅ ԱՌԱՋ

Պարգևիչ ողորմության, պարգևի՛ր ինձ ուղղափառ հավատով և բարի գործով ու Քո Սուրբ Մարմնի և Արյան հաղորդությամբ Քեզ մոտ գալ, և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս, ամեն:



ԱՂՈԹՔ
Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՆԱԼՈՒՅ ՀԵՏՈ

Գոհանում ենք Քեզնից, Քրիստոս թագավոր մեր, որ կենարար Մարմնովդ և սուրբ Արյամբդ մեզ կենդանություն պարգևեցիր. ամեն:



ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԳԻՐՔ ԸՆԹԵՐՑԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Տէր Հիսուս Քրիստոս, բայց սրտիս աչքերը՝ լսելու Քո խոսքը, հասկանալու և կամքդ կատարելու, քանզի պանդուխտ եմ ես այս աշխարհում:

Մի՛ ծածկիր ինձնից Քո պատգամները, այլ բայց իմ աչքերը, որ հասկանամ օրենքիդ հրաշալիքները. հայտնի՛ր ինձ Քո իմաստության անհայտն ու ծածուկը:

Ես Քեզ եմ ապավինում, Աստված իմ, թող Քո մտքի լույսով լուսավորվի նրա իմաստը, որ ոչ միայն գրվածը կարդամ, այ-

լև կատարեմ, որպեսզի մեր կարգացած խոսքերն ու սուրբերի վարքը մեզ ի վնաս չլինեն, այլ ի նորոգություն, լուսավորություն, սրբագործություն, ի փրկություն հոգու և ի ժառանգություն հավիտենական կյանքի:

Քանի որ Դու ես լուսավորում խավարի մեջ նստածներին, և Քեզանից է ամենայն բարիք ու ամենայն կատարյալ շնորհ. ամեն:



ԱՂՈԹՔ ԵԿԵՂԵՑԻ ՄՏՆԵԼԻՍ

Այս սուրբ Եկեղեցու դռան մոտ և աստվածընկալ ու լուսապայծառ սրբությունների առաջ երկյուղածությամբ խոնարհվում և երկրպագում ենք Քեզ, Տեր Աստված, որ երկնքում ես և ամենուր: Քո սուրբ, հրաշալի և հաղթող Տերությունդ օրհնում ենք ու փառավորում և Քեզ՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն օրհնություն ու փառք ենք մատուցում, այժմ և միշտ և հավիտեանս հավիտենից, ամեն:

**ԱՂՈԹՔ ԵԿԵՂԵՑՈՒՑ
ԴՈՒՐՍ ԳԱԼԻՍ**

*Թագավոր՝ երկնավոր, Քո եկե-
ղեցին անշարժ պահիր և Քո ան-
վանը երկրպագողներին պահիր
խաղաղուիթյան մեջ, ամեն:*



ԶՂՋՄԱՆ ԱՂՈԹՔ

Գաղտնիքներ Քննող, մեղանչել եմ Քո առջև կամովին և առանց կամքի, գիտակցաբար և անգիտակցաբար, թողու՞թյուն շնորհի՛ր մեղավորիս, քանզի ծննդից սուրբ Ավագանի մինչև այսօր մեղանչել եմ Քո Աստվածության առաջ իմ զգայարաններով և մարմնիս բոլոր անդամներով, և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս, ամեն:



ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ

Քրիստոս Աստված մեր, պահպանիր մեզ Սուրբ և պատվական խաչիդ հովանու ներքո՝ խաղաղության մեջ, փրկիր տեսանելի և անտեսանելի թշնամուց և արժանի արա գոհությամբ Քեզ փառավորել Հոր և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:



ԱՂՈԹՔ ՆԵՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԻՆ

Բարերա՛ր Տեր, ողորմությամբդ նայի՛ր Քեզ երկրպագողիս և Քո սուրբ անունը փառաբանողիս: Զորությունների Տե՛ր, հանդարտեցրո՛ւ մեզ բոլոր սատանայական խռովություններից և աշխարհիկ հոգսերից: Առաքի՛ր Քո խաղաղության հրեշտակին, որպեսզի գիշեր ու ցերեկ, քնած և արթուն ժամանակ անխռով պահի մեզ: Որպեսզի այս կյանքում Քեզ՝ Տիրոջդ ծառայելով բարեպաշտությամբ և արժանավորապես, ժամանենք երկն-

քի հավիտենական արքայությունը, որն աշխարհի ստեղծման սկզբից պատրաստեցիր Քո սրբերի համար: Եվ նրանց հետ գոհանալով՝ փառավորենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:



ԱՂՈԹՔ ՓՈՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Խնամող արարածների, խաչիդ նշանով պահիր հոգիս և մարմինս մեղքերի պատրանքներից, դևերի փորձություններից, անիրավ մարդկանցից և հոգու և մարմնի բոլոր վտանգներից. և ողորմիր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս. ամեն:



ԱՂՈԹՔ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ

Քո առջև ենք ընկնում, Սուրբ Աստվածածին, և աղաչում անարատ Կույսիդ՝ բարեխոսի՛ր մեզ համար և աղաչի՛ր Միածին Որդուդ՝ փրկել մեզ փորձությունից և մեր բոլոր վտանգներից, ամեն:



**ԱՂՈԹՔ ԱՊԱՎԻՆՈՒԹՅԱՆ
Ս. ԽԱԶԻՆ**

*Տէր Հիսուս, Քո Խաչը թող
մեզ ապավեն լինի, երբ որ երև-
աս Հոր փառքով՝ լուսավոր ամ-
պերի մեջ, այն ժամանակ մենք՝
Քեզ հուսացողներս, շամաչենք,
այլ Քո մեծ զորությամբ ուրախա-
նանք Քո աջ կողմում՝ իբրև լույ-
սի և ցերեկվա որդիներ. ամեն:*



ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ

Տէր Աստված մեր, Քո ժողովրդից փարատիր ցավերը և բժշկիր հիվանդությունները, և բոլորին շնորհիր կատարյալ առողջություն՝ Քո ամենահաղթ հաշի նշանով, որով մարդկանց տկարությունները Քո վրա վերցրիր և դատապարտեցիր կյանքի ու փրկության թշնամուն:

Դու ես մեր կյանքը և փրկությունը, բարերար և բազումողորմ Աստված, և միայն Դո՛ւ ես կարող մեր մեղքերը ներել և մեր ցավերն ու հիվանդությունները վանել մեզանից, որովհետև

Քեզ հայտնի են մեր կարիքները: Բարիքների պարգևո՞ղ, պարգևի՞ր Քո առատ ողորմությունները Քո արարածներին՝ յուրաքանչյուրի կարիքների համաձայն, որոնք միշտ փառավորում և օրհնաբանում են Քեզ՝ Ամենասուրբ Երրորդությանդ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:



ԶԻՆՎՈՐԻ ԱՂՈԹՔ

Ամենակարող Տեր, Քո աստ-
վածային զորութեամբ ամրացրու
ինձ, տուր ինձ վճռականութիւն՝
սուրբ հայրենյաց քաջ պաշտպա-
նը լինելու, Քո հոգևոր սպառա-
զինութեամբ, դարձրու ինձ ավելի
համարձակ, կարգապահ ու ընկե-
րասեր, երկնային զորքիդ բարե-
խոսութեամբ զորացրու և պահպա-
նիր զինակիցներիս, հրամանա-
տարներիս ու ինձ. Քո Սուրբ Աջի և
Բարի հայացքի ներքո՝ ապահով ու
անվրդով պահիր հզգս հայոց: Եվ
Քեզ փառք այժմ և միշտ և հավի-
տյանս հավիտենից, ամեն:

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՂՈԹՔ

Անճառելի Արարիչ և ճշմարիտ լույսի ու իմաստության Աղբյուր, հեղինր իմ մտքում պայծառ ճառագայթները, և իմ անձից փարատիր մառախուղն ու անգիտությունը:

Դո՛ւ, որ մանուկների լեզուները դարձնում ես պարզախոս, կրթի՛ր իմ լեզուն և իմ շուրթերը լցրո՛ւ Քո շնորհների օրհնությամբ:

Տուր ինձ իմանալու սրամտություն, պահելու ընդունակություն, մեկնելու կորովամտություն, ուսանելու դյուրընկալու-

Թյուն և շնորհախոսելու առա-
տուԹյուն:

Պատրաստելով հարդարի՛ր իմ
մուտքը, ուղղի՛ր իմ ընթացքը և
ավարտին հասցրու իմ ելքը Տեր
Հիսուս Քրիստոսով, ամեն:



ՈՒԽՏԱՎՈՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԱՂՈԹՔ

Բարերար՝ և բազումողորմ
Աստված, Քո առաջ ընկնելով
աղաչում ենք ամբողջ սրտով և
գթություն խնդրում Քեզանից:
Ինչպես խոստացար ծառանե-
րիդ և ասացիր՝ այն ամենը, ինչ
Հորից հավատով խնդրեք Որդու
անունով, կտրվի ձեզ, շնորհի՛ր և
այժմ հավատացյալներիս և կա-
տարի՛ր մեր խնդրանքները, քան-
զի Քեզ ենք ապավինել: Եվ Քո
առատ ողորմությամբ մխիթա-
րի՛ր մեզ այս կյանքում և առաջ-
նորդելով հասցրո՛ւ երկնքի ան-

Ճառելի արքայությունդ՝ ի փա-
ռաբանություն և ի պատիվ ամե-
նասուրբ Երրորդությանդ, այժմ
և միշտ և հավիտյանս հավիտե-
նից, ամեն:



ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ԱՄԵՆՕՐՅԱ ԱՂՈԹՔԸ

*Աստված իմ, տո՛ւր ինձ հոգու
խաղաղությամբ դիմավորել այն
ամենը, ինչ կբերի այս օրը, և օգ-
նի՛ր ինձ անմնացորդ հանձնվելու
Քո սուրբ կամօքին:*

*Օրվա յուրաքանչյուր ժամին և
ամեն բանում, խրատի՛ր և աջակ-
ցի՛ր ինձ:*

*Ինչպիսի լուրեր էլ ստանամ
օրվա ընթացքում, սովորեցրո՛ւ
ինձ ընդունել դրանք հանդարտ
հոգով և այն անսասան հավա-
տով, որ ամեն ինչում Քո սուրբ
կամօքը կա:*

Ղեկավարիր իմ մտքերն ու
զգացմունքները բոլոր իմ խոս-
քերում և գործերում:

Յուրաքանչյուր աննախադեպ
պարագայում թույլ մի տուր ինձ
մոռանալ, որ այդ ամենը ի վե-
րուստ է առաքված Քո կողմից:

Սովորեցրո՛ւ ինձ ամեն մար-
դու հետ խելամիտ ու շիտակ
վարվել, չվշտացնելով ու չվրդով-
վեցնելով և ոչ մեկին:

Տե՛ր, ինձ ուժ տո՛ւր կրելու այս
առաջիկա օրվա հոգնություն-
ներն ու բոլոր դիպվածները:

Ղեկավարիր իմ կամքը, և սովո-
րեցրո՛ւ ինձ աղոթե՛լ, հուսա՛լ, հա-
վատա՛լ, սիրե՛լ, համբերե՛լ ու ներե՛լ,
ամեն:

ՀՏԴ 27-534.3

ԳՄԴ 86.37

Ե 859

Տպագրվում է

Երաշխավորությամբ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Հրատարակչական խորհրդի

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԱՂՈԹԱԳԻՐՔ

Կազմեցին՝ Գեղամ սարկավազ Ավետիսյանը և

Սեակ սարկավազ Գրիգորյանը

Էջաղրումը և կազմը՝ Գոռ Գրիգորյանի

Երիտասարդի աղոթագիրք/ Հրատ.

Ե 859 պատրաստեց՝ Հայ Եկեղեցու Համաշ-

խարհային Երիտասարդական Միա-

վորում (ՀԵՀԵՄ). - Ս. Էջմիածին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատա-

րակչություն, 2019.- 40 էջ:

ISBN 978-9939-59-237-4

ՀՏԴ 27-534.3

ԳՄԴ 86.37



9 789939 592374



ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ